ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Արսեն Զուլֆալակյան[1]

1990-91ԹԹ. ԻՐԱՔՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎՐԱ. ՍԻՐԻԱԿԱՆ (ԱՐԱԲԱԿԱՆ) ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Բանալի բառեր՝ *Իրաք, Սիրիա, Սաուդյան Արաբիա, ՊԾԱԵՀԽ, Քուվեյթ, Ծոցի ճգնաժամ*

«Սառը» պատերազմի ավարտը և դրանով պայմանավորված միջազգային-քաղաքական իրողությունները նոր օրակարգ ձևավորեցին ոչ միայն Եվրոպայում, այլև Մերձավոր Արևելքի՝ ռազմավարական նշանակության տարածաշրջանում: Եթե նախկինում «բլոկային» քաղաքականության հատկանիշներն իրենց վառ արտացոլումն էին գտել տարածաշրջանային երկրների արտաքին քաղաքական առաջնահերթություններում, ապա այժմ երկրների համար քաղաքական նախընտրությունների հստակեցման միջակայքը փոխվել էր՝ դառնալով առավել ընդգրկուն, ազատ: Նման պայմաններում տարածաշրջանի պետությունների մի մասը սկսեց արտաքին քաղաքական ուղեգծի՝ նոր իրողություններին համապատասխանեցման գործընթացը: Սակայն այդ գործընթացը զուգորդվեց տարածաշրջանային անվտանգությանը ու կայունությանընետված նոր մարտահրա-վերով. Իրաքը միակողմանի կերպով 1990թ. օգոստոսի 2-ին

[1] ԵՊՀ միջազգային հարաբերությունքերի ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ arsjulf@gmail.com

ռազմական գործողություններ սկսեց Քուվեյթի դեմ[2]: Իրաքի ռազմարշավին մասնակցում էր 120 հազ. հետևակ և 350 զրահամեքենա/տանկ[3], մեծ քանակությամբ օդուժ ներառող զորաբանակով: Մինչև օգոստոսի 8-ը Քուվեյթի բանակի հատվածային դիմադրությունը ճնշվեց և Իրաքը անեքսիայի ենթարկեց այն: Օգոստոսի 8-ին Իրաքի կողմից Քուվեյթում ստեղծված մարիոնետային կառավարությունը դիմեց Բաղդադին՝ Քուվեյթը Իրաքի 19-րդ նահանգ ճանաչելու խնդրանքով, որը և արագ բավարարվեց: Իրաքի ռազմարշավը և նրան հետևած քաղաքական գործողությունները մեծ իրարանցում առաջացրին ինչպես բուն Պարսից ծոցի և արաբական այլ երկրներում, այդ երկրներն ընգրկող միջազգային կազմակերպություններում, այնպես էլ առաջատար պետություններում, միջազգային կազմակերպություններում: Իրաքի գործողությունները դատապարտող մի շարք բանաձևեր ընդունվեցին ՄԱԿ-ի ԱԽ-ն (թիվ 660-02.08.1990թ, թիվ 661-06.08.1990թ, թիվ 662-09.08.1990թ, թիվ 665-25.08.1990թ, թիվ 670-25.10.1990թ, թիվ 678-29.11.1990թ, թիվ 687-03.04.1991թ, թիվ 688-05.04.1991թ/«ոչ թռիչքային գոտու հաստատում» բանաձևեր[4]), Արաբական երկրների լիգայի (ԱԵԼ), Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի (ՊԾԱԵՀԽ) կողմից: Հակամարտությունը աննախադեպ էր, քանի որ նրա տարբեր կողմերում հայտնվեցին արաբական քաղաքական տերմինաբանությամբ՝ «եղբայրական» երկրներ:

[2] Առավել մանրամասն տե՛ս Аль-Амри Саид Сальман. Второй Кризис в Заливе (1990-1991гг.) и его последствия // сб/ статей «Арабский Сборник». (Հղում ըստ Арутюнян А. Э.. Турецко-сирийские отношения на рубеже веков (1980-е годы - начало XXI века): Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, М 2007, էջ 103):

[3] Տես Вооруженные конфликты Война в Персидском заливе 1990-1991 гг. ("Буря в пустыне"). Часть 1, 12.03.2011 http://www.modernarmy.ru/article/124

[4] Տես IRAQ. Recolutions, http://www.iilj.org/courses/documents/iraqsecurity councilresolutions.pdf

Իրաքի կողմից Քուվեյթի անեքսիան արաբական միասնականությունը ենթարկեց բացառիկ փորձության՝ փոխելով արաբական աշխարհի զարգացման ուղիների վերաբերյալ գոյություն ունեցող տեսլականներն ու պանարաբական կարգախոսների իրատեսականությունը, որոնք մի քանի տասնամյակ միավորիչ դեր ունեին գաղութատիրության դեմ պայքարի, ազգային ինքնիշխանության և տնտեսական ինքնուրույնության կայացման գործում[5]: Ճգնաժամի սկսվելուց ի վեր Եգիպտոսի նախագահ Հ. Մուբարաքը հայտարարեց, թե «իրաքյան զորքերի ներխուժումը Քուվեյթ լրջագույն բաժանում առաջացրեց արաբական աշխարհում»[6], իսկ Քուվեյթի զանգվածային տեղեկատվության միջոցների նախարար Շեյխ Սոուդ Նասեր ալ-Սաբախայի կարծիքով, «Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ լուրջ սեպ խրեց համաարաբական զգացմունքներում»[7]: Իրականում իրաքյան կամ Ծոցի ճգնաժամը վերհանեց ոչ միայն «արաբական աշխարհում» առկա լուրջ հակասությունները, այլև հստակ ուրվագծեց, որ այդ երկրների ազգային շահերը գերակա են նրանց կողմից հռչակված համաարաբական իդեալների նկատմամբ: Այս համատեքստում հարկ է նշել, որ արաբական երկրները խիստ տարբերակված վերաբերմունք դրսևորեցին Պարսից ծոցի ճգնաժամի նկատմամբ: Ընդհանուր քննադատողական հռետորաբանության ներքո հստակ

[5] Տե՛ս МурхиджБ., Позиции некоторых арабских стран в иракско-кувейтском конфликте / Б. Мурхидж // Ближний Восток, http://www.middleeast.org.ua/research/kuveyt2.htm .Дата доступа: 30.08.2007.:

[6] Տե՛ս Энкисам Раскол арабского мира из-за вторжения Ирака в Кувейт // Аль-Ахбар Аль-масрия (Египет). 01.04.1996թ (սկզբ.արաբ., ռուս.թարգ.), էջ 20:

[7] Տե՛ս Выступление министра средств массовой информации Кувейта Шейх Соуд Насера аль-Сабах // Аль-Ахбар Аль-масрия (Египет). 27.07.1994. (սկզբ. արաբ., ռուս.թարգ.) էջ 2:

տեսանելի էր արաբական մի շարք երկրների՝ (Եմեն, Հորդանան, Սուդան և այլն) լատենտ դրական վերաբերմունքն իրաքյան վարչակազմի նկատմամբ. դրա հիմնական դրդապատճառներն էին Իրաքի հետ տնտեսական և այլ բնույթի կապերի առկայությունը և հակամարտության էպիկենտրոնից այս կամ այն արաբական երկրի հեռահարությունը: Ընդհանուր առմամբ, կարող ենք արձանագրել, որ հակամարտության ընթացքում պարզ դարձավ, որ արաբական երկրների մի զգալի մասը ավելի շատ մտահոգ է ճգնաժամից իր ձեռքբերումներով և ոչ թե համաարաբականության գաղափարով: Հենց այդ տեսանկյունից, կարծում ենք, մինչ ճգնաժամի վերաբերյալ տարածաշրջանային և գլոբալ արձագանքի, և հատկապես խնդրի վերաբերյալ Սիրիայի մոտեցումների դիտարկմանն անցնելը, փորձենք անդրադառնալ արաբական որոշ երկրների և ինստիտուտների արձագանքին:

Հակամարտության վերաբերյալ «համաարաբական կարծիքի» որոշակիացման գործում կարևոր դեր ուներ Արաբական երկրների լիգան (ԱԵԼ), որն օպերատիվ արձագանքեց Իրաքի կողմից Քուվեյթի անեքսիային: Դա կարևոր էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի Կանոնադրության 52-րդ և 53-րդ հոդվածներով[8] ԱԵԼ-ին՝ որպես տարածաշրջանային կազմակերպության վերապահվում է «տարածաշրջանային հակամարտություններում կարգավորիչ գործառույթներ ստանձնելու» իրավունք: 1990 թ. օգոստոսի 3-ին ԱՊԼ խորհուրդը ձայների մեծամասնությամբ բանաձև ընդունվեց[9], որը դատապարտում էր «Իրաքի կողմից Քուվեյթի օկուպացիան», պահանջում էր «իրաքյան զորքերի ետ քաշումը մինչև 1990 թ. օգոստոսի 1-ի սահմաններ», ճանաչում էր «Քուվեյթի տարածքային

[8]Տե՛ս Устав ООН, http://www.un.org/ru/documents/charter/chapter9.shtml

[9] Տե՛ս The Kuwait Crisis: Basic Documents. E. Lauterpacht,C. J. Greenwood, Marc Weller, Cambridge University Press, 01.01.1991. 330p., էջ 121:

ամբողջականությունն ու անխախտելիությունը, կազմակերպության անդամ այլ երկրների կողքին անվտանգ համագոյակցության իրավունքը»[10]: ԱԵԼ-ի Խորհուրդն անընդունելի համարեց «ցանկացած այլ պետության միջամտությունը արաբական երկրների գործերին»[11]: Սա փաստում էր այն, որ ԱՊԼ-ի երկրները դեռևս չէին ընկալում ստեղծված իրավիճակի մասշտաբայնությունը և տարածաշրջանային սպառնալիքի աստիճանը[12], հետևաբար կարծում էին, թե արտատարածաշրջանային ուժերը չպետք է մասնակցեն առկա խնդրի լուծմանը:

Պարսից ծոցի ճգնաժամին նվիրված հաջորդ գագաթաժողովը տեղի ունեցավ օգոստոսի 10-ին Կահիրեում, որի եզրափակիչ հայտարարության մեջ նշվում էր[13]. «հաստատել ԱԵԼ-ի Խորհրդի 1990 թ. օգոստոսի 3-ի որոշումը, հիմք ընդունելով ՄԱԿ-ի ԱԽ-ի 660-րդ բանաձևը՝ դատապարտվում էր Քուվեյթի օկուպացիան և անհրաժեշտ էր համարվում իրաքյան զորքերի անհապաղ դուրս բերումը Քուվեյթի տարածքից, ընդունվում էր նրա տարածքային ամբողջականության անխախտելիությունն ու անկախությունը,

[10] ԱԵԼ-ի օգոստոսի 3-ի որոշմանը դեմ էր՝ Իրաքը, Մավրիտանիան, Սուդանը, Յեմենը, վերապահումով քվեարկեցին՝ ՊԱԿ-ը, Հորդանանը: Նիստին չէր մասնակցում՝ Լիբիա. (Տե՛ս E. Lauterpacht,C. J. Greenwood, Marc Weller.,նշվ. աշխ.,էջ 122-123):

[11] Տե՛ս նույն տեղը:

[12] ԱՊԼ-ի Խորհրդի կողմից վերոնշյալ որոշումներն ընդունվեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 660-րդ բանաձևի ընդունումից մեկ օր անց: ՄԱԿ-ի բանաձևը կոչ էր անում «անհապաղ դուրս բերել իրաքյան զորամիավորումները Քուվեյթի տարածքից»: Բացի այդ, բանաձևում խոսվում էր նաև ՄԱԿ-ի Կանոնադրության վերոնշյալ հոդվածների հիման վրա «ԱԵԼ-ի՝ խաղաղարար գործառույթներ ստանձնելու» անհրաժեշտության մասին (Առավել մանրամասն տե՛ս http://www.iilj.org/courses/documents/iraqsecurity councilresolutions.pdf)

[13] Տե՛ս E. Lauterpacht, C. J. Greenwood, Marc Weller., նշվ. աշխ. էջ 126:

աջակցում էր նրան՝ իր տարածքի ազատագրման ու ինքնիշխանության վերականգման գործում, սատարում էր Սաուդյան Արաբիայի և Պարսից ծոցի մյուս արաբական երկրների՝ անգամ արտատարածաշրջանային օժանդակության ներքո ինքնապաշտպանական միջոցառումներին՝ Քուվեյթից իրաքյան զորամիավորումների դուրս բերման գործում, սակայն Քուվեյթի օրինական իշխանության վերականգնումից հետո դրանց դուրս բերման պայմանով, արձագանքում էր Սաուդյան Արաբիայի և Պարսից ծոցի մյուս երկրների պահանջին՝ որպես օգնություն համաարաբական զինվորական ստորաբաժանումներ ուղարկել Քուվեյթ[14]: Եթե համեմատենք ԱՊԼ-ի Խորհրդի 1990 թ. օգոստոսի 3-ին և օգոստոսի 10-ի հայտարարության տեքստերը, ապա կարող ենք փաստել, որ երկրորդում Իրաքին «պատժելու» մոտեցումներն ավելի խիստ էին, ընդհուպ մինչև ինքնապաշտպանությունից բխող ամեն տիպի (այդ թվում ռազմական) և բնույթի միջոցառումների ձեռնարկում՝ այդ թվում նաև արտատարածաշրջանային ուժերի աջակցությամբ: Հիշեցնենք, որ ԱՊԼ-ի Խորհրդի օգոստոսի 3-ի որոշման 5-րդ կետը բացառում էր արաբական երկրների գործերին ցանկացած արտաքին միջամտությունը: Սակայն, եթե հարցին քաղաքական իրատեսականության դիտանկյունից մոտենանք, ապա հաշվի առնելով ռեգիոնի ռազմավարական նշանակությունը գլոբալ ուժային մրցապայքարում, ակնհայտ էր, որ եթե տարածաշրջանից դուրս գտնվող տերություններից որևէ մեկը զորք մտցնի Քուվեյթ կամ Իրաք, գործնականում այդ զորքերն այլևս այդ տարածքից դուրս չեն բերվի: Կարծում ենք, այդ մասին

[14] Նշենք, որ ԱԵԼ-ի օգոստոսի10-ի բանաձևին վերապահումով քվեարկել են՝ Հորդանանը, Ալժիրը, Յեմենը: Քվեարկության ժամանակ ձեռնպահ են եղել՝ Սուդանը, Մավրիտանիան, Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը, իսկ բացակա է եղելԹունիսը (Այս մասին առավել մանրամասն տե՛ս E. Lauterpacht,C. J. Greenwood, Marc Weller.,նշվ. աշխ., էջ 127):

լավ տեղյակ էին նաև ռեգիոնի արաբական երկրները, սակայն նրանք հայտվել էին մի այնպիսի իրավիճակում, երբ մի կողմից չէին կարող թույլ տալ Իրաքին վարվել այդպես, քանզի նրա հաջորդ թիրախը իրենք էին լինելու, մյուս կողմից՝ բավարար ռեսուրս ու համատեղ կամք չունեին հակադարձելու Բաղդադին, հետևաբար դրսի օժանդակության կարիք այնուամենայնիվ կար: Որոշակիորեն ամփոփելով նշենք, որ փաստորեն ԱԵԼ-ի քայլերը ավելի շուտ խորհրդանշական էին, և դրանք գործնականում միայն դևնորեցին արաբական աշխարհում առկա տարակարծությունները, ներքին տարանջատվածությունը, որի արդյունքում այդ կազմակերպությունն ինչ-որ առումով միայն բարոյական աջակցություն ցուցաբերեց Քուվեյթին նրա՝ մեծ խնդիրների լուծման հարցում:

Ծոցի ճգնաժամի տարիներին իր հակահիրաքյան գործունեությամբ աչքի ընկավ արաբական տարածաշրջանային մեկ այլ կազմակերպություն՝ Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդը (ՊԾԱԵՀԽ), որի անդամ որոշ երկրներ իրաքյան ղեկավարության կողմից ակնհայտորեն դիտարկվում էին որպես հնարավոր հաջորդ թիրախներ: Նշենք, որ նավթ արտահանող արաբական երկրները լուրջ հիմքեր ունեին զգուշանալու Իրաքի հնարավոր ագրեսիվ գործողություններից՝ հաշվի առնելով իրան-իրաքյան պատերազմի արդյունքում Բաղդադի կուտակած պարտքերը, առկա տնտեսական խնդիրները և տարածաշրջանում Բաղդադի լիդերության չնվազող հավակնությունները: Սակայն միաժամանակ փաստենք, որ հոգեբանական և հատկապես ռազմական առումով այդ երկրները պատրաստ չէին համակերպվելու հարձակման ենթարկվելու մտքի հետ՝ գիտակցելով դրա հետևանքերն իրենց ինքնիշխանության և

ֆիզիկական գոյության առումով: Չնայած դրան, իրաքյան ներխուժման նախօրեին անգամ ՊԾԱԵՀԽ-ի միջազգային և տարածաշրջանային ակտիվությունն այնուամենայնիվ բավական պասիվ էր. Ակտիվ էր միայն Սաուդյան Արաբիան, որը դեռևս մինչ բուն հակամարտության մեկնարկը, փորձում էր միջնորդի դեր ստանձնել՝ Իրաքի և Քուվեյթի միջև բախումը կանխելու նպատակով: Այդ ուղղությամբ նրա ձեռնարկած վերջին քայլը 1990 թ. հուլիսի 31-ին և օգոստոսի 1-ին Ջեդդա քաղաքում իրաք-քուվեյթյան բանակցություններն էին, որոնք որևէ արդյունք չտվեցին: Դրանից կարճ ժամանակ անց, երբ Իրաքը սկսեց ռազմական տեխնիկա կուտակել Քուվեյթի հետ իր սահմանին և քայլառքայլ մոտենում էր Սաուդյան Արաբիայի սահմաններին, մեծացնելով այդ երկրի հետ բախման հավանականությունը, Սաուդյան Արաբիայի թագավորը հանդիպում ունեցավ ՄԱԷ նախագահ շեյխ Զաեդբեն Սուլթանի հետ, որի նպատակն էր Իրաքի հնարավոր հարձակման դեպքում համատեղ ռազմական ջանքերի կոորդինացումը:

1990 թ. օգոստոսի 7-ին Սաուդյան Արաբիայում տեղի ունեցավ ՊԾԱԵՀԽ-ի նախարարների խորհրդի՝ Ծոցի ճգնաժամին նվիրված նստաշրջանը, որի ընթացքում հայտարարվեց Քուվեյթի օկուպացիայի անընդունելիության և իրաքյան զորամիավորումների դուրս բերման անհրաժեշտության մասին: Նույն օրը Սաուդյան Արաբիան արգելափակեց իր տարածքով անցնող իրաքյան նավթամուղը՝ հիմք ընդունելով Իրաքի տնտեսական շրջափակման վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի օգոստոսի 2-ի բանաձևը: Սաուդյան Արաբիան և ՊԾԱԵՀԽ-ի երկրները, որոնց մեջ նույնպես կար տարակարծություններ խնդրի լուծման մեթոդների ու ձևի հետ, ոչ միայն քննադատեցին Իրաքի քայլերը, այլև պատրաստակամություն հայտնեցին սեփական տարածքում

ընդունելու խաղաղության աջակցման միջազգային ուժերը՝ կոչ անելով արաբական երկրներին մասնակցել իրաքյան սպառնալիքից իրենց տարածքները պաշտպանելու միջոցառումներին: Նշենք, որ Սաուդյան Արաբիան և ՊԾԱԵՀԽ-ի որոշ երկրներ ռազմական ստորաբաժանումներ տրամադրեցին Քուվեյթի ազատագրման օպերացիային մասնակցելու նպատակով: Փաստորեն կարող ենք արձանագրել, որ ՊԾԱԵՀԽ-ի անդամ-երկրները և հատկապես Սաուդյան Արաբիան ճգնաժամի սկզբնական փուլում, թեկուզ և անօգուտ, սակայն այնուամենայնիվ փորձեցին որոշակի քայլեր ձեռնարկել իրավիճակի բացասական զարգացումը կանխելու ուղղությամբ: Միջանկյալ առումով ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է արձանագրել, որ ճգնաժամի ետնապատկերում արաբական տարածաշրջանային կազմակերպություններն ունեին բավականին անօգնական տեսք: Համաարաբական կառույցները ի վիճակի չգտնվեցին ժամանակին արձագանքել ստեղծված իրավիճակին, ինչի արդյունքում Իրաքի գործողությունների հանդեպ վերաբերմունքի տեսանկյունից մեծ տարաբաժանում առաջացավ արաբական աշխարհում:

Համաարաբական խնդիրների համար նախատեսված տարածաշրջանային կառույցների գործունեության ետնապատկերում Ծոցի ճգնաժամի վերաբերյալ իրենց տարբերվող դիրքորոշումներն ունեին նաև առանձին երկրներ: Ընդհանուր առմամբ, ակնհայտ է, որ Իրաքի գործողությունների նկատմամբ արաբական երկրները վարում էին երկակի քաղաքականություն, որն արտահայտվում էր առանձին երկրների՝ Իրաքի գործողությունների հանդեպ կոնկրետ դիրքորոշում չորդեգրելու և հետևապես նաև նրան աջակցելու տեսքով: Մի կողմից, այդ երկրները փորձում էին իրենց հեռու պահել իրաքյան

վարչակարգից, մյուս կողմից, ամեն կերպ փորձում էին թաքցնել իրենց իրական վերաբերմունքը՝ չեզոքացնելով Իրաքի հանդեպ թվացյալ բացասական վերաբերմունքը: Օրինակ՝ հակաիրաքյան կոալիցիայի անդամ Եգիպտոսը, Սաուդյան Արաբիայի հետ միասին դեռևս մինչև օգոստոսյան ագրեսիայի սկիզբը փորձում էին միջնորդի դեր ստանձնել Իրաքի և Քուվեյթի միջև, սակայն երբ Ս. Հուսեյնը դրժեց Հ. Մուբարաքին տրված իր խոստումը չսկսել ռազմական գործողություններ, պաշտոնական Կահիրեի մոտեցումը խստացավ և սկսեց ածանցվել ԱԵԼ-ի և ՄԱԿԱԽ-ի կողմից ընդունված բանաձևերից: Մարոկկոյի թագավորական վարչակարգը նույնպես իր աջակցությունը հայտնեց ԱՊԼ-ի և ՄԱԿԱԽ-ի բոլոր որոշումներին ու բանաձևերին՝ առանձին զորաջոկատ ընդգրկելով միջարաբական ուժերի կազմում: Իրաքի գործողությունների հանդեպ դրական դիրքորոշում ունեցող արաբական երկրների շարքում էր Եմենը, որն այդ ժամանակա-հատվածում ՄԱԿ-ի ԱԽ-ում արաբական համայնքը ներկայացնող միակ երկիրն էր: Եմենի պրոիրաքյան դիրքորոշման վառ արտահայտությունը դրսևորվում էր նրանում, որ նրա ներկայացուցիչը շարունակաբար ձեռնպահ էր մնում կամ առհասարակ դեմ էր քվեարկում ՄԱԿ ԱԽ-ի բոլոր այն բանաձևերին, որոնք կարող էին որևէ կերպով վնաս հասցնել Իրաքին: Եմենը արաբական աշխարհում Ճգնաժամի վերաբերյալ առանձին դիրքորոշում որդեգրած միակ երկիրը չէր. նման մոտեցում ցուցաբերեց նաև Հորդանանը: Ճգնաժամի ընթացքում Հորդանանում ձևավորվեց 2 մոտեցում՝ պաշտոնական շրջա-նակների և զանգվածային լրատվության միջոցների: Մասնավո-րապես, հորդանանյան ԶԼՄ-ները մեծ դեր խաղացին իրաքյան վարչակարգը գովաբանելու և նրա գործողություններն արդարացնելու գործում: Միևնույն ժամանակ, Հորդանանի պաշտոնական շրջանակները փորձում էին առավելագույնս

հետևել միջազգային դիրքորոշմանը: Ս. Հուսեյնի գործողությունները քննադատել չշտապող արաբական երկրների շարքում էր նաև Սուդանը, որը չնայած ֆորմալ աջակցում էր ՄԱԿ-ի ԱԽ-ի գործողություններին՝ մասնակցելով Իրաքի նկատմամբ տնտեսական շրջափակմանը: Սուդանի ԶԼՄ-ները, որ արտացոլում էին ազգաբնակչության մեծամասնության կարծիքը[15], ընդհանուր առմամբ, սատարում էին Իրաքին՝ միաժամանակ ձգտելով չհրահրել Եգիպտոսին: Այդպիսով, Սուդանը վարում էր հավասարակշռված քաղաքականություն՝ ձգտելով օգուտներ քաղել իրաքյան ճգնաժամից առհասարակ:

Տևական ժամանակ տարբեր ձևաչափերով Իրաքի հետ Քուվեյթի հարցով բանակցությունների անարդյունավետությունը հանգեցրեց նրան, որ 1990թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ ԱԽ-ն թիվ 678 բանաձևով Իրաքին տրվեց մեկ և կես ամիս դադարեցնելու

[15] Այս համատեքստում առկա է ևս մեկ խնդիր, որը ևս չի կարելի աչքաթող անել. Խոսքը արաբական երկրների հանրային կարծիքի մասին է: Այսպես, արաբական պետությունների դիրքորոշումը միշտ չէր, որ համապատասխանում էր հասարակության զանգվածային քաղաքական տրամադրություններին: Մի շարք վերլուծաբանների կողմից նշվում է, որ Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ խիստ հակասական դիրքորոշումների տեղիք տվեց արաբական աշխարհում՝ Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև ՄԱԷ-ի էլիտաները սատարեցին Քուվեյթին, սակայն «արաբական փողոցի» մակարդակում լրիվ այլ իրադրություն էր: Ինչպես նշում է ռուս հետազոտող Ի. Ա .Մատվեեվը՝ «ԱՄՆ-ի և Իսրայելի դեմ պայքարելու Ս. Հուսեյնի կոչերը գրեթե ամենուրեք արժանացան բնակչության լայն շրջանների հավանությանը: 1990 թ. օգոստոսին Սիրիայի արևելքում Իրաքին աջակցելու նպատակով տեղի ունեցան զանգվածային հանրահավաքներ: Որոշ աղբյուրների տվյալներով, 1990 թ. սեպտեմբերին սիրիացիների գրեթե 75%-ը, իսկ նույն տարվա դեկտեմբերին՝ մոտ 85%-ը համակրում էր Իրաքին»: Սա վկայում էր սոցիալական անհավասարության, ինչպես նաև պետությունների և այդ պետությունների շարքային քաղաքացիների դիրքորոշումներում առկա տարաբաժանման մասին: (Այս մասին առավել մանրամասն տե՛ս МатвеевИ.А., Национальная и общеарабская слагаемые политики Сирии на Ближнем Востоке / М., 2004., էջ 107)

Քուվեյթի բռնազավթումը: Եթե դա տեղի չունենա, ապա ՄԱԿ անդամ երկրները Քուվեյթի հետ համագործակցության ներքո պարտավորվում են իրենց տրամադրության տակ առկա բոլոր միջոցներով Իրաքին պարտադրել իրագործել ՄԱԿ ԱԽ թիվ 660(1990թ.) և մյուս բանաձևերը: Սա նշանակում էր, որ ՄԱԿ-ը իրավունք տվեց այդ ժամանակ արդեն ձևավորված Կոալիցիոն բազմազգ ուժերին ռազմական գործողություններ սկսել Քուվեյթի ազատագրման նպատակով: Ռազմական գործողությունները, որ գլխավորեց ԱՄՆ-ը, անվանվեց «Փոթորիկն անապատում», մեկնարկեց 1991թ. հունվարի 17-ին և ավարտվեց փետրվարի 28-ին Քուվեյթի ազատագրմամբ և Իրաքի տարածքի 15%-ի զբաղեցմամբ: Գործողությանը մասնակացում էր 41 երկիր՝ այդ թվում Սիրիան և Թուրքիան:

Ծոցի ճգնաժամի ժամանակ արաբական երկրների շարքում առանձնակի ակտիվությամբաչքի ընկավ հատկապես Սիրան[16]: Դա պայմանավորված էր երկկողմ և տարածաշրջանային բնույթի մի շարք իրողություններով: Օրինակ՝ ռուս վերլուծաբան Ա.Վ.Արխիպովը ընդգծում է այն հանգամանքը, որ. «Սիրիան այն եզակի արաբական երկիրն էր, որը 1980-88թթ. իրան-իրաքյան պատերազմի ընթացքում աջակցություն ցուցաբերեց Իրանին, ինչը հանգեցրեց Իրաքի հետ երկկողմ հարաբերությունների սրմանը» [17]: Մեկ այլ հետազոտողի՝ Ա.Վ. Ահմեդովի կարծիքով, Սիրիայի նոր արտաքին քաղաքականությունը պայմանավորված էր ոչ միայն ԽՍՀՄ-ի թուլացմամբ և ՍԱՀ-ում տնտեսական իրավիճակի վատթարացմամբ, այլև Դամասկոսում Բաղդադի կողմից

[16] Տե՛ս Syria and Iran: Middle Powers in a Penetrated Regional System, Anoushiravan Ehteshami, Raymond A. Hinnebusch, Routledge, 31.01.2002թ. – 248p., https://books.google.am/books?id=U_iFAgAAQBAJ &dq=damascus +decla ration+ 1990&hl=hy&source=gbs_navlinks_s

[17] Տե՛ս Архипов А. В., Сирия: факторы политико-экономических изменений / А. В. Архипов // Ближний Восток и современность: сб. ст. Вып. 16. М., 2002. էջ 11:

իրականացվող քաղաքականության հանդեպ լուրջ մտահոգությունների առկայությամբ: Հեղինակը գտնում է, որ «իրաքյան ռազմական մեքենայի հզորացումը լիովին փոխում էր ուժերի հավասարակշռությունը ոչ հօգուտ Դամասկոսի և դրա վառ ապացույցը 1975թ. Լիբանանում քաղաքացիական պատերազմից ի վեր Բաղդադի կողմիցիակասիրիական ուժերին տրվող օժանդակությունն էր» [18]:

Սիրիան Ծոցի ճգնաժամում ակտիվ դերակատարություն էր ստանձնել հենց ամենասկզբից: Դամասկոսը պարբերաբար նախազգուշացնում էր Իրաքի և Քուվեյթի միջև հասունացող հակամարտության, դրա լուծման հնարավոր արտաքին միջամտության և արաբական երկրների տարաբաժանման վտանգների մասին՝ շեշտելով, որ ինքը կողմ է առկա հակամարտության խաղաղ լուծմանը: Իր ուսերին ունենալով Իրաքի հետ «հակաիսրայելական գործողությունների պակտի» փորձը, 1980-88թթ. իրան-իրաքյան պատերազմի հետևանքով Իրաքի հետ խաթարված հարաբերությունները[19], ինչպես նաև Ս. Հուսեյնի նախաձեռնությամբ արաբական աշխարհում ենթարկվելով մեկուսացման ներկա վիճակին՝ Սիրիան առաջին արաբական երկիրն էր, որ խստագույնս դատապարտեց Իրաքի ներխուժումը Քուվեյթ: Սիրիան Քուվեյթի անեքսիան բնութագրեց որպես «խոշոր աղետ և աններելի սխալ, որը արաբներին վերադարձնում է նախապատմական, նախաիսլամական

[18] Տե՛ս Ахмедов, В. М., նշվ. աշխ, էջ 22:

[19] Այս առումով հատկանշական է հիշատակել Իրաքի ԱԳՆ նախարար Թ. Ազիզի պատասխանը Սիրիայի հետ հարաբերությունների վերականգնման վերաբերյալ լրագրողի հարցին: Նախարարը նշեց, որ. «Քանի որ վերջին 8 տարվա մեջ Սիրիան գործել է ընդդեմ Իրաքի, ապա նախ պետք է դա մեկնաբանի: Սա է բարիդրացիականության անբեկանելի մեր պայմանը»: (Այս մասին տե՛ս Eyal Ziser. Asad'sLegacy: Syriain Transition, C. Hurst&Co. Publishers, 2001, էջ 149):

ժամանակաշրջան»[20]: Հարկ է նշել, որ վերոնշյալ ուղղությամբ Սիրիայի կողմից ձեռնարկվող քայլերի միջակայքը բավականաչափ բազմազան էր և համընդգրկուն: Դամասկոսը հասկանում էր, որ սա մեկուսացումից դուրս գալու, տարածաշրջանային և միջազգային նոր դերակատարում ստանալու լավ հնարավորություն է, ուստի սիրիական ղեկավարությունը բոլոր հնարավոր ճակատներում ձգտում էր ամեն քայլ ձեռնարկել՝ իր ձեռքում կենտրոնացնելով ճգնաժամի հաղթահարման նախաձեռնությունը: Մյուս կողմից՝ Սիրիան լավ գիտակցում էր, որ զուտ արաբական երկրների ջանքերով խնդիրը լուծել հնարավոր չի լինի, այսինքն հատկապես առանց ԱՄՆ-ի[21]՝ այդ թվում ռազմական ներգրավվածության, ճգնաժամը չի հարթվի, ուստի պետք է շտապել: Քուվեյթի զավթումից անմիջապես հետո Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը, մինչև հակամարտության գերլարումը խնդիրը լուծելու նպատակով, հանդես եկավ արաբական երկրների ղեկավարների հանդիպում հրավիրելու առաջարկով[22]: 1990 օգոստոսի 10-11 Կահիրեիում մեկնարկեց ԱԵԼ-ի գագաթաժողովը, որտեղ Սիրիան, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան և Ծոցի այլ երկրներ ընդունեցին հակաիրաքյան մի շարք բանաձևեր: Իրաքի քայլերի դատապարտումից զատ, որոշում կայացվեց Ծոցի արաբական երկրներին՝ Սաուդյան Արաբիային, ԱՄԷ-ին և այլն ռազմական օգնություն ցուցաբերել. ռազմական ստորաբաժանումներ պետք է ուղարկվեին Ծոցի տարածաշրջան, որոնք նրանք պետք է համագործակցեին ԱՄՆ-ի կոալիցիոն զորամիավորումների հետ[23]: Ըստ ընդունված բանաձևի

[20] Տե՛ս Նույն տեղում, էջ 153:

[21] Այդ մասին էին վկայում ԱՄՆ պետական պաշտոնյաների հայտարարությունները և ՄԱԿԱԽ-ի շրջանակներում հակաիրաքյան գործողություններ սկսելու նախաձեռնությունները, բանաձևերը:

[22] Տե՛ս Мурхидж Б., նշվ. աշխ, http://www.middleeast.org.ua/research/kuveyt2.htm.

[23] Տե՛ս Նույն տեղում:

Սիրիան պարտավորվեց զորք ուղարկել Սաուդյան Արաբիա[24]: Դամասկոսը սակայն, միանշանակ կողմ լինելով Ծոց զորք ուղարկելու առաջարկին, հայտարարեց, թե իր զորամիավորումները չեն մասնակցի բուն Իրաքի տարածքում իրականացվող ռազմական գործողություններին՝ սթափ գիտակցելով Սիրիայի համար սահմանակից արաբական Իրաքից բխող հավանական բոլոր հետևանքերը: Կահիրեի գագաթաժողովը մի շարք հարցերում կոնսոլիդացրեց արաբական երկրների՝ Սիրիայի, Եգիպտոս և Սաուդյան Արաբիայի մոտեցումները, ովքեր արաբական աշխարհում փաստացիրորեն ստանձնեցին ԱՄՆ-ի կողմից առաջնորդվող հակահիրաքյան կոմպանիայում արաբական առանցքի դերակատարումը[25]: Արաբական կոնսոլիդացման ջանքերից զատ, Սիրիան ակտիվորեն մասնակցում էր հակամարտության վերաբերյալ ԱՄՆ-ի կողմից ՄԱԿ ԱԽ մանդատի ներքո իրականացվող միջազգային կոալիցիոնորոշումների իրականացմանը՝ գիտակցելով, որ միայն արաբական ուժերով արդյունքի հասնելը խիստ անիրատեսական է, սակայն միաժամանակ չցանկանալով թույլ տալ բացառապես արտաքին ուժերի կողմից միջարաբական ճգնաժամի կարգավորումը: Այս առումով Ծոցի ճգնաժամի ընթացքում Սիրիայի դերի և նշանակության կտրուկ ավելացման լավագույն վկայությունն էր

[24] Նախատեսվում էր 1990 թ. օգոստոսին մի քանի հազար կոմանդոս, իսկ սեպտեմբերին՝ նաև զրահամեքենաների 9-րդ դիվիզիան ուղարկել Ծոց: Սիրիան 10 հազ. զինվոր և 300 տանկ Իսրայելի հետ սահմանից Հոլանի բարձունքներ տեղափոխեց ծոց: (Տե՛ս Eyal Ziser, նշվ. աշխ, էջ 56):

[25] «Այդ առանցքի ստեղծում/զարգացումը, - Սիրայում ԱՄՆ դեսպան Է. Ջերեջյանի խոսքերով, - գործնականում շատ հուսադրող է հակամարտության կարգավորման տեսանկյունից և հատկապես արաբաիսրայելական խաղաղության գործընթացի ներքո»: (Տե՛ս Gulf Crisis Leads To US-Syrian Rapprochementhttp://www.csmonitor.com/1990/0913/osyria.html):

1990 թ. սեպտեմբերի 12-ին ԱՄՆ պետքարտուղար Ջ. Բեյքերի այցը Դամասկոս: Դա 1970-ականներից հետո նրա առաջին այցն էր Սիրիա: Սա խորհրդանշական քայլն էր բարիդրացիական հարաբերությունների հաստատելու ուղղությամբ և միաժամանակ կարևոր ազդանշան, որ Սիրիայի մեկուսացման և Արևմուտքի հետ հարաբերությունների սառեցման ժամանակաշրջանը մոտենում է ավարտին: Ջ. Բեյքերը կարևորեց Սիրայի ներգրավվածությունը ճգնաժամի և հակասադամյան գործընթացներում, հույս հայտնեց արաբաիսրայելական խնդրի մոտալուտ խաղաղ կարգա-վորմանհարցում, միաժամանակ իր մտահոգությունը, հայտնեց, որ Սիրիան աջակցում է ահաբեկչական համարվող կազմակերպություններին: Սակայն բանակցությունների ժամանակ նա նաև նշեց, որ առկա իրավիճակը այնքան կարևոր է, որ այդ խնդիրներով հանդերձ նրան պետք է լուծում գտնեն Ծոցի ճգնաժամի համար[26]: Ջ. Բեյքերի այցին նախորդեցին ու հաջորդեցին Հ. Ասադի և Ջ. Բուշի հեռախոսազրույցները, ապա 1990 թ. նոյեմբերի 23-ին Ջենովայում հանդիպումը: Այս իրավիճակում Սիրիայի նկատմամբ վերաբերմունքը որոշակիորեն փոփոխվեց նաև Արևմտյան Եվրոպայում. քննարկումներ ծավալվեցին Սիրիայի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների վերացման վերաբերյալ, միաժամանակ Լոնդոնը 1990 թ. նոյեմբերին վերականգնեց իր դիվանագիտական հարաբերությունները Սիրիայի հետ, որոնք խզվել էին 1987 թ.:

ԱՄՆ-ի համար Սիրիայի անսպասելի կառուցողական դերակատարումը հակահիրաքյան արաբական մոբիլիզացիայի մեջ խիստ կարևոր էր Ծոցում ահռելի միջազգային ռազմական ուժերի ներկայության լեգիտիմացման տեսանկյունից: ԱՄՆ պաշտոնյաները լիահույս էին, որ «Կահիրե-Դամասկոս-Էր Ռիադ»

[26] Տե՛ս նույն տեղը:

առանցքը կարող է Ծոցի ճգնաժամից հետո դառնալ տարածաշրջանում կառավարման կարևոր առանցք: Զուգահեռաբար նշենք, որ Իրաքը, տեսնելով իր շուրջ ձևավորվող իրավիճակը, բանախոս (նավթի նախարարին) ուղարկեց Սիրիա հաշտության և տնտեսական պատժամիջոցների հարցերը լուծելու համար: Սակայն Սիրիան, ստանալով ԱՄՆ աջակցությունը, մերժեց այդ առաջարկը:

Որոշակիորեն ամփոփելով՝ նշենք, որ հակաիրաքյան արաբական ճակատը Սիրիայի համար ձեռքբերում էր, քանի որ նա ոչ միայն վերականգնեց իր հարաբերությունների արաբների հետ, այլև նոր հարաբերությունների մեկնարկ ունեցավ ԱՄՆ-ի հետ: Սիրիայի պատկերացմամբ հակարաբական ճակատի ստեղծումը նպատակ ուներ մի քանի նպատակ՝ 1. կանխել Ծոցի ճգնաժամի լուծումը արաբական «նեղ» շրջանակներում, քանզի դա կհանգեցներ Ս.Հուսեյնի կողմից տարածքային և քաղաքական զգալի ձեռքբերումների, 2. լեգիտիմացնել Ս.Հուսեյնի վարչակարգի դեմ նախատեսվող միջազգային գործողությունները և ապահովել արաբական մասնակցություն այդ գործողություններին և 3. հնարավորություն տալ Սիրիային օգուտ քաղել՝ դուրս գալով մեկուսացումից և բարիդրացիական հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի հետ:

Սիրիայի կարևորությունը, բացի հակարաբական ճակատի գործարկումից, նաև մեկ այլ գործընթացում բավական մեծ էր. դա Ծոցի ճգնաժամի նկատմամբ Իրանի դիրքորոշման որոշակիացումն ու մեղմումն էր: Սիրիան մեծ դեր ուներ Իրանի կողմից կոալիցիոն ուժերի աջակցությանը կամ չեզոքության պահպանման

հարցում[27]: Ինչ որ առումով տարօրինակ է, սակայն հարկ է նշել, որ Իրանը կոալիցիոն ուժերի կողմից դիտվում էր որպես հակասադամյան գործընթացի թույլ օղակներից մեկը: Դա պայմանավորված էր երկու հանգամանքով: Առաջին՝ 1990թ. օգոստոսի 15-ին Ս.Հուսեյնի «խաղաղության» նախաձեռնությունից հետո հարաբերություններն Իրանի հետ համեմատաբար կարգավորվել էին, քանզի Ս. Հուսեյնը համաձայնվել էր՝որպես առկա խնդիրների կարգավորման հիմք ընդունել նրանց միջև կնքված 1975թ. Ալժիրի համաձայնագիրը: Բացի դա, Իրաքը ազդակ էր ուղարկել Թեհրանին, թե պատրաստվում է ազատել իրանական տարածքները և վերադարձնել բանտարկյալներին ու գերիներին: Երկրորդ՝ Իրանը ամենևին շահագրգիռ չէր Ծոցում արևմտյան ռազմական ներկայության ավելացմամբ:1990թ. սեպտեմբերի 22-25 Սիրիայի նախագահ Հ.Ասադը այցելեց Իրան ներկայացնելու, որ հակաիրաքյան դաշինքը անհաջողության կմատնվի, եթե Սիրիան դրան չմիանա: Չնայած Իրանը քննադատում էր Իրաքի ներխուժումը Քուվեյթ, սակայն միաժամանակ դեմ էր տարածաշրջանում արևմտյան մասնակցությամբ խնդիրների լուծմանը: Սիրիայի նախագահի այցը հաջողվեց, քանի որ որոշվեց երկու երկրների միջև փոխնախագահի և ԱԳՆ նախարարի մակարդակով հանձնաժողով ստեղծել, որը ապահովելու էր երկու կողմերի շահերի բավարարումը ճգնաժամի ընթացքում: Այդ մասին հայտարարվեց սեպտեմբերի 25-ին: Բանակցությունների արդյունքում Իրանը և Սիրիան համաձայնեցին Ծոցում միացյալ քաղաքականության իրականացնել:

1991. հունվարի 17-ին ԱՄՆ բազմազգ կոալիցիոն ուժերի հետ ՄԱԿ ԱԽ բանաձևերի ներքո սկսեց Իրաքի պատժիչ ռազմական գործողությունը: Սիրայի համար սա բավական ռիսկային քայլ էր:

[27] Տե՛ս Syria and Iran: Middle Powers in a Penetrated Regional System, Anoushiravan Ehteshami, Raymond A. Hinnebusch. Routledge, 31. 01. 2002, p. 56.

Իրաքը, որ արաբական երկիր էր և ոչ հեռու անցյալում Սիրիայի ռազմավարական գործընկերն էր հակահիսրայելական պայքարի գորընթացում, այսօր դարձել էր հիմնական ախոյանը: Հատկապես «արաբական երկիր լինելու» հանգամանքը արաբական աշխարհում կարող էր Դամասկոսի համար հետագայում անցանկալի հետևանքներ ունենալ: Սա լավ գիտակցում էր Հ.Ասադը, ով 1991թ. հունվարի 21-ին բաց նամակով դիմեց Ս.Հուսեյնին՝ կոչ անելով համաձայնվել ՄԱԿ ԱԽ բանաձևերի հետ և դուրս գալ Քուվեյթից՝որդեգրելով «արաբական երկրների շահերից բխող» մոտեցում: Եթե այդ մոտեցումը իրողություն դառնա, ապա Սիրիան կաջակցի Իրաքին հաղթահարել առկա խնդիրները, անգամ ռազմական օգնություն կցուցաբերի: «Խնդիրները չեն լուծվում ուժով, անհրաժեշտ է դուրս բերել զորքերն Իրաքից և նստել բանակցությունների սեղանի շուրջ, քանի դեռ ուշ չէ»,- նշում էր Հ. Ասադը: Նամակում նշվում էր, որ «ազգի շահերը գերակայություն ունեն այլ շահերի նկատմամբ և ազգային շահի համար անհրաժեշտ զոհաբերություններն ընկալվում են բոլորովին այլ կերպ: Սպառնալիքին դիմագրավելու համար անհրաժեշտ են ճշգրիտ ու հաշվարկված որոշումներ և հենց այդ ենք ակնկալում Ձեզնից: Եվ եթե Դուք այժմ ընդունեք այնպիսի որոշում, որը կպաշտպանի Իրաքն ու արաբական աշխարհը մեծ պատերազմից, ապա դա կդիտարկվի որպես անհրաժեշտ պահին Իրաքի կողմից արված խիզախ քայլ» [28]: Սակայն իրաքյան կողմը հրաժարվեց դադարեցնել ռազմական գործողությունները, ինչը և վճռորոշ նշանակություն ունեցավ Սիրիայի կողմից 1991թ. հունվարի 17-ից փետրվարի 27-ը տևած

[28] Տե՛ս Таким образом Х. Асад поддерживал Кувейт // Аль-Раиаль-Ам (Кувейт). 12.07.2000. (սկզբ. արաբ, ռուս. թարգ.), էջ 3:

«Փոթորիկ անապատում» գործողությանբուն ռազմական գործողություններին թեկուզ և սահմանափակ, բայց մասնակցության համար: Ասադի նամակը իրականում քարոզչական բնույթի քայլ էր, որը Սիրիային անհրաժեշտ էր լեգիտիմացնելու իր հակահիրաքյան մոտեցումները: Մյուս կողմից՝Սիրիայի մասնակցությունը պատերազմին իրականում բավական սահմանափակ էր: Չնայած Դամասկոսը զորք էր հատկացրել կոալիցիային, սակայն այն պայմանով, որ այդ զորքը բացառապես կռվի Քուվեյթի տարածքում, զուգահեռաբար սիրիա-իրաքյանսահմանային հրետանային հարվածներին Սիրան ոչ միշտ էր պատասխանում, այդ կերպ ցանկանալով ցույց տալ, թե շատ հակված չէ ռազմական հարվածներ հասցնել Իրաքին և դա պետք է հետագայում գնահատվի[29]:

«Փոթորիկն անապատում» գործողության արդյունքնում Քուվեյթի ազատագրման և Իրաքի պարտության պայմաններում Մերձավոր Արևելքը նոր ռազմաքաղաքական իրավիճակում հայտնվեց: Այստեղ նոր դերակատարում ստացած Սիրիան փորձեց շարունակել օգտվել ճգնաժամի ընթացքում իր տարածաշրջանային և միջազգային աճած դերակատարման պտուղներին: Ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական առումով Ծոցի ճգնաժամը ձեռքբերումներով լի էր Դամասկոսի համար[30]: Պարսից ծովի պատերազմի ժամանակաշրջանում

[29] Տե՛ս Eyal Ziser, նշվ. աշխ., էջ 59:

[30] Սիրիան Ծոցի ճգնաժամի տարիներին տնտեսական ոլորտում ունեցավ որոշակի ձեռքբերումներ: 1990 թ. վերջին Սաուդյան Արաբիան և Քուվեյթը 2.5-3 մլրդ դոլար գումար փոխանցեցին Սիրիային իր զորամիավորումները Ծոց ուղարկելու համար: Դա միաժամանակ յուրահատուկ փոխհատուցում էր Դամասկոսին, քանի որ ճգնաժամի արդյունքում Քուվեյթում, Սաուդյան Արաբիայում աշխատող սիրիացի աշխատանքային միգրանտները վերադարձան հայրենիք և հայտնվեցին տնտեսական վատ վիճակում: Մյուս կողմից տնտեսական ընդհանուր ակտիվության նվազումը հարվածել էր Սիրիայի

Սիրիան հանդես էր գալիս տարածաշրջանում ճգնաժամի հաղթահարմանն ուղղված տարաբնույթ նախաձեռնություններով: ՍԱՀ-ը մշտական աշխատանք էր տանում համաարաբական համերաշխության վերականգնման և Պարսից ծոցում ՊԾԱԵՀԽ-ի, Սիրիայի, Եգիպտոսի դաշինքի տեսքով համաարաբական անվտանգության համակարգի ստեղծման ուղղություններով: 1991 թ. փետրվարի 17-18-ը Կահիրեում ԵԱՀ-ի, ՍԱՀ-ի և ՊԾԱԵՀԽ-ի անդամ 6 երկրների միջև կայացած հանդիպման ընթացքում քննարկվող հիմնական թեմաներից մեկը ութ արաբական երկրների մասնակցությամբ համատեղ զորմամիավորման ստեղծումն էր՝ հետագայում ցանկացած տիպի ագրեսիա կանխելու նպատակով: Այդ հանդիպման ընթացքում մշակվեցած սկզբունքները հետագայում ամրագրվեցին 1991 թ. մարտի 6-ի Դամասկոսի հռչակարգում[31]: Հռչակագիրը արձանագրում էր արաբական աշխարհում իրավիճակի ցանկացած սրացման, ճգնաժամային իրադրության առաջացման պարագայում ընդհանուր արաբական ուժմայի շահերից բխող դիրքորոշման որդեգրման անհրաժեշտության մասին: Ընդունված փաստաթղթում, մասնավորապես, ամրագրվում էին հետևյալ դրույթները՝

- Պետությունների՝ միմյանց գործերին չմիջամտելու և միմյանց միջև ծագած հակամարտությունները խաղաղ միջոցներով կարգավորելու մասին ՄԱԿ-ի Կանոնադրության և այլ միջազգային փաստաթղթերի դրույթներին հետևելու անհրաժեշտություն,

---

արտահանման և տուրիզմի ծավալներին, ուստի կորուստները որևէ ձևով պետք է լրացվեին: (Տե՛ս Eyal Ziser, նշվ. աշխ., էջ 52-53):

[31] Տե՛ս Security in the Persian Gulf:The Evolution of a Concept. M.H.Ansari, Indian Ambassador, SaudiArabia http://www.idsa-india.org/an-sep9-1.html

▪ Համաարաբական նոր կարգի ստեղծման համար քայլերի ձեռնարկում, որի ձևավորման հիմնական ուղությունները սահմանվում էին Հռչակագրի լայն շրջանակներով,

▪ Հռչակագիրը ստորագրած պետություններից յուրաքանչյուրի ինքնիշխանության սկզբունքի պահպանում և նրանց միջև համագործակցության ապահովում,

▪ Արաբական ժողովուրդներին բազմակողմանի օգնության տրամադրում՝ սպառնալիքներին դիմագրավման համար, ինչպես նաև նրանց միջև ծագող հակասությունների կարգավորում միջազգային իրավունքի հիման վրա:

Ըստ էության, միջարաբական փաստաթուղթն իր մեջ ամփոփում էր միջազգային փորձը՝ ձգտելով միջազգային հանրության մեջ փորձված դրույթները տեղայնացնել արաբական իրականությանը: Հռչակագրում ներառված մեկ այլ կարևոր հանգամանք էր այն, որ դրա նախաձեռնողները հատուկ ուշադրություն էին դարձրել տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրներին, ինչի կապակցությամբ փաստաթղթում նշվում էր՝«Քուվեյթի ազատագրմանը հաջորդող ժամանակաշրջանը համարել ամենահարմարը միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան Իսրայելի սպառնալիքներին հակազդելու համար: Եգիպտոսի ու Սիրիայի ռազմական ուժերի տեղակայումը Սաուդյան Արաբիայի և Պարսից ծոցի այլ արաբական պետությունների տարածքում դիտարկել որպես վերջիններիս կողմից սեփական տարածքի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ պահանջ: Այդ ուժերը համարել համաարաբական խաղաղապահ ուժերի միջուկ՝ համաարաբական անվտանգության համակարգի ստեղծման շրջանակներում: Ձգտել ազատագրել Մերձավոր Արևելքի տարածաշրջանը զանգվածային ոչնչացման զենքից և

մասնավորապես՝ միջուկային զենքից» [32]: Դամասկոսյան հռչակագիրն փաստացիորեն ցուցադրում էր արաբների ցանկությունը՝ ստեղծելու իր բովանդակությամբ ինքնուրույն անվտանգության համակարգին համարժեք մեխանիզմ[33]: Եվ այդ հռչակագիրը, ինչպես նշվում էր փաստաթղթում, կարող էր միավորել արաբական ուժերը և ամրապնդել նրանց քաղաքական դիրքերն ու համախմբել պաշտպանական հնարավորությունները: Սակայն տարածաշրջանային անվտանգության համակարգի ձևավորմանը խանգարեցին ՊԾԱԵՀԽ-ի և Սիրիայի միջև առաջացած տարաձայնությունները, որոնցից առաջինը հանդես էր գալիս ԱՄՆ-ի ազդեցության ընդլայնման, մյուսը՝ Արևմուտքի ներկայության սահմանափակման և անվտանգության համակարգում նոր խաղացողների՝ Թուրքիայի և Իրանի ներառման դիրքերից:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ 1990-91թթ. Ծոցի ճգնաժամը կարևոր դերակատարում ունեցավ տարաշրջանում սիրական քաղաքականության փոխակերպման և դերակտարման ավելացման տեսանկյունից: Այն նաև Դամասկոսի քաղաքական հմտության շնորհիվ ավելացրեց Սիրիայի կշիռը տարածաշրջանային գործընթացներում, միաժամանակ նոր հորիզոններ բացեց արտաքին աշխարհի և հատկապես ԱՄՆ-ի, Արևմուտքի հետ հարաբերություններում: Առանձնահատուկ կարևորէ այն հանգամանը, որ հակահիրաքյան կոալիցիայում Սիրիան սկսեց համագործակցել իր ավանդական հակառակորդ Թուրքիայի հետ, որը տարածաշրջանային անվտանգության և առկա խնդիրների լուծման տեսնակյունից կարևոր իրողություն էր:

[32] Տե՛ս նույն տեղը:
[33] Տե՛ս Мурхидж Б., նշվ. աշխ., http://www.middleeast.org.ua/research/kuveyt2.htm

ВОЗДЕЙСТВИЕ ИРАКСКОГО КРИЗИСА 1990-91гг НА РЕГИОНАЛЬНЫЕ ПРОЦЕССЫ. СИРИЙСКАЯ (АРАБСКАЯ) ПОЗИЦИЯ

(резюме)

Джулфалакян Арсен

Конец 20-ого века ознаменовался не только окончанием холодной воины, но и началом Иракского кризиса, который поставил перед новыми вызовами не только Ближний Восток, но и все передовое международное сообщество. Аннексия Кувейта со стороны Ирака стало причиной, чтобы более чем 40 стран мира под предводительством США, создали международную коалицию и под юрисдикцией резолюций СБ ООН начали контрдействие против Ирака. Это создало качественно другую ситуацию в Ближнем Востоке.

В представленной статье говорится о политике Арабского государства Сирия в контексте анализа вышеуказанных реалий Иракского кризиса. В особенности, делается акцент на представление подходов Сирии в контексте общеарабской позиций таких организации, как Лига арабских государств и Совет сотрудничества арабских государств Персидского залива. В период иракского кризисаотдельным объектом исследования в статье становятся отношения Сирии и США с одной стороны, и Сирии и Ирана, с другой. Одновременно в статье анализируется инициатива Сирии по созданию системы безопасности пост кризисного Ближнего Востока и основные факторы, мешающие реализации этой инициативы.

THE IMPACT OF IRAQI CRISIS ON REGIONAL PROCESSES. POSITION OF SYRIA AND ARAB STATES

(summary)

Julfalakyan Arsen

The end of the 20th centuary was marked not only by the end of Cold War, but also by the beginning of Iraqi crisis, which brought new challenges for the Middle East as well as for the international community. The Iraqi annexation of Kuwait resulted in the U.S –led coalition that included 40 countries, which started its action against Iraq in accordance with the UN Security Council resolutions. This created a new reality in the Middle East.

This article presents the policy and approaches of Syrian Republic during the Gulf crisis having in mind and analyzing the abovementioned realities, as well as the policy of Arab League and Gulf Cooperation Council. We attached special importance to the Syria-USA and Syria-Iran cooperation in that period. At the same time the article highlights the Syrian initiatives to create regional security system in the post-crises Middle East and the main obstacles for its realisaiton.